



Պատասխանատու  
Հովանակա փոխակա

# ՕՐԱԳԻՐ ԶՄԻՌՆԻՈՅ

Նամակը հարկի էն  
տո. Գ. Գ. Գնադապրեան

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԲԱՆԱՍԻՐՈՐԳ ՏԱՐԻ ԶՄԻՌՆԻՈՅ ԾԱՐԱԹ 24 ՄԱՅԻՍ 1880 ԹԵՐ 1145

### ՔԵՂԱՐԿԱՆ

ԱՆՆՆԱՆ : Վեհ Վիկտորիա թագուհին խորհրդարանի բացման առթիւ առ լորտս և առ երեսփոխանն ուղղած ատենական ճառովն կը յայտնէ թէ Անգղիոյ և միւս մեծ տէրութեանց իջեղած մտերմական յարաբերութեանց և նոցա գործակցութեանց շնորհիւ Պրիւսիոյ դաշնագրութեան ուղղութեամբ մասերուն փութով և լիւրի գործադրութիւնն կը յաւանդուի զխաւորապէս այն մասերուն, որոնք թուրքիոյ բարեկարգումներն, և Մանիստի կրօնի ու Յուստատանի սահմաններու խնդիրներն կ'որոշին : Թէ՛ սոյն վերջին պայմաններու գործադրութիւնն մեծապէս կարեւորութիւն ունի ազգային մէջ Արևելեան նորագլուխութեան առաջն առնելու : Եւ ահա սոյն նպատակաւ, կը յաւանդուին Վեհամեծառութիւնն, Կ. Պոլսոյ մէջ արտաքին կարգի գեապանի մը ներկայութիւնը հաստատած է : Յետոյ կ'անցնի Ափղանիստանի խնդրոյն, որոյ մասին կը յայտնէ թէ՛ իւր դիտարկներն բոլորովն հաշտարար են, և թէ՛ իւր վիստահն է այնպիսի հարգադրութիւններ հաստատել որոց շնորհիւ Ափղանիստանի անկախութիւնն, միանգամայն և Հնդկաց պետութեան հետ նորա բարեկամական յարաբերութիւնքն ապահովուին : Նորին Վեհամեծառութիւնն ի վերջ ճառին Անգղիոյ ներքին շահերու պատկանեալ մի քանի օրինադրութեանց ցնցակ մի կը ներկայացնէ, որոց մասին իւր դիտարկներն ու փափակներն յայտնելով հանդերձ կ'իմացնէ թէ՛ յիշեալ կարևոր խնդիրներն խորհրդարանի յանձնարարական նիստերուն մէջ հետզհետէ երևափութանաց ու շարժութեան պիտի ելնարկուին :

Սոյն ատենախոսութեան թուրքիոյ նկատող մասին վրայ, հետեւեալ քնն Հասարակաց խորհրդարանին մէջ խօսք մնալով : Պ. Կլէտտիլըն յայտարարեց թէ՛ Անգղիա մեծ կարևորութիւն կ'ընծայէ Օսմանեան Պետութեան ամենայն կեր-

պիւ հաստատութեանը, և Բ. Դուռն կարող է փոստահիլ Անգղիոյ վրայ, որ բնաւ չհամիր նուազեցնել նորա երկիրները և ոչ խի չափաւորել յուր լիւրի վեհամեծառութիւնը : Այլ Անգղիոյ պահանջածն միմիայն գործադրութիւնն է թուրքիոյ այն խոստումներուն, որք Պրիւսիոյ դաշնագրութե մէջ հանգիստապէս նշանակուած են : Արտաքին գործոց նախարար լորտ կրանֆիլը շրջաբերական ծանուցագրով մի էր յորդական տէրութիւններն ի համաձայնութիւն կը ճշտուի Պրիւսիոյ դաշնագրոյն մնացորդ մասանց գործարարութեան համար : Յիշեալ շրջաբերականին մէջ լորտ կրանֆիլը, գլխաւորապէս երեք որոշ կէտերու վրայ կը խօսի որք են, Մանիստի կրօնի, Հնդկական և Հայկական խնդիրներն : Եւրոպական տէրութեանց ոմանք արդէն հաւանութիւն տուած են սոյն ծանուցագրին :

Թայ՛ իւր կը գրէ թէ Պրիւսիոյ դաշնագրին ստորագրող տէրութեանց երեսփոխանք Պրիւսիոյ պիտի գումարին նոյն դաշնագրին փութով և կատարեալ գործադրութեան միջոցներն ստորինելու համար, որոց մին է և Կ. Պոլսոյ նստելիք միջազգային յանձնարար մը կ'ազատութիւնը : Պրիւսիոյ մէջ գումարուելու խորհուրդին պիտի նախագահէ Հոհենլոօնէ իշխանը :

Կառավարութիւնն Պ. Բիքթօն Ուորլու հանգրագրեան և Պ. Պէննէթ հարեւրապետն Անտուալի փոխ-հիւպատոս անուանեց, որոնք և հրահանգ ընդունած են ընդհանուր հիւպատոս Պ. Ուիլքինի գալուտեան սպասել ի Պրիւսիոյ :

Մէնչընհայտի քաղաքապետին նախագահութեան ներքեւ փութիւն մի գումարուելով յատուկ ուշադրութեան առնուեցան այն հեռագրական տեղեկութիւններն, որով Բրիտանական հիւպատոսներն Հայաստանի, և Արևմտեան Պարսկանտանի սովելոց աղէտանի վիճակը կը նկարագրէին : Պ. Կլէտտիլը և Պ. Յոյսֆը յիշեալ Միթիւնկին իրենց ակամայ բացակայութիւնն յայտնելով հանդերձ, առաջինն 50, երկրորդն

20 անգ զ. լորտ նուիրեցին ի նպատակ սովելոց : Սոյն միթիւնկը յատուկ մասնագործ մի կազմեց հանդ անակութեան տարիներն ժողովելով յուր շարկել ուր որ անկ է :

ԳԱՂԱՅԱՆ : Ռուսական դեսպան Օրլով իշխանն որ Հարթ մանի խնդրոյն պատճառաւ Բեյ ըստուրի մեկնած էր, Բարիկ վերագարձաւ : Ծերակոյտի ժողովոյն հրահարեալ նախագահ Պ. Մարթէլի տեղ ընտրութիւն մի ընելու համար բաւական զբաղեցան ճարտարագիտական Պ. Լէոն Սէ, իւր անհիւզմեանք Պ. Ժիւլ Սիմօնը նախագահութեան բարձրացելու համար : Պ. Ժիւլ Սիմօն յանձն շտաւ իրեն անաշարկեալ սոյն պաշտօնն, և Պ. Լէոն Սէ ծերակոյտի ժողովոյն նախագահ անուանեցու 147 ձայնիւ ընդդէմ 121 պարսպքուէթովի :

Գաղղիական կառավարութեան կողմէ հրաման ընդունած լինելով Աթէնքի գաղղիական դեսպան Պ. Ֆիլիպս Պոլիս հաստատուեցաւ իբրև տեղապահ Պ. Գոլիքիէն բացակայութեան ժամանակ : Այս պատճառաւ Պ. Ֆիլիպս կանխախնդրած էր որ Լաթիս թիւղիլ տէրութեան շոգենաւով Տալանտի ներգնդէն անցնելու հրամանագրին Բ. Դուռնէն առնուի : Իսկ Աթէնքի համար գաղղիական դեսպան պիտի անուանուի Պ. Ժիւլիպոս :

Գաղղիոյ կառավարութիւնն Պ. Ժիւլիպոս Կ. Պոլսոյ պիտի գրկէ Պ. Կոչընիս պաշտօնով :

ՌՈՒՍԻԱ : Լորտ Մէլիքօֆ զօրավարն Ռուսիոյ համար պատրաստուած սահմանադրութեան ծրագրով մի ծերակոյտի և երեսփոխանական ժողովոց հաստատութիւն առաջարկելով, Չարն մերժեց զայն բնելով : ոչ թէ ինքն այլ իւր յանձնարար բարեկարգումներ պիտի գործադրէ Ռուսիոյ մէջ : Այս առթիւ քաղաքիս Լա Ռեֆօր լրագիրն խիստ օրինակող դիտարկութիւն մի կը նշէ Ռուսական բարեկարգման ժամանակն Ռուսիոյ համար փակ կլանայ մինչև ց'որ տնօրէնութիւնն . . . նախախնամական :

### ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆՆՆԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Անգղիոյ խորհրդարանն արդի քաղաքական աշխարհին վրայ ունեցած ընդհանուր ազդեցութեան հանրաձայնութիւն կերպարանք մի ունի, և իրաւամբք իսկ բանիբուն քաղաքագէտներու ուշադրութեան մէջ առաջին տեղը բռնած է : Արդէն կը յանձնեմք որ նոյն վեհ յարկին ներքեւ ողջած պաշտօնական բանախօսութիւնք գրեթէ քաղաքական աշխարհի վարչական բեռներու ուղղութիւնը կը տնօրէնեն, ուր և ժողովուրդներու ապագայի սահմաններ իսկ կը գծուին . . .

Մեծահանձար գլուխներ ինչ որ մարդկութեան բարեւոյն համար երէկ կամ առջիկ օր ուրոյն անանձնակի իւրաքանչիւրն իւր գրատան կամ խոյնի մէջ խորհած և պատրաստած էր, այսօր կամ վաղը նոյն խորհրդարանի պատկառելի ատենին մէջ հարեւրաւոր ազնիւ լորտերու, մարքիզներու և պարոններու թերեւ և հազարաւոր ունկնդիրներու առջև կը պարզէ, և կը յայտնէ շնորհալի և իմաստալից հրապարակախօսութեամբ : Մարդկային սեռի ազնուութեան չքննող տեսարան . . .

Սոյն պատուական խորհրդարանի, և նորակազմ նախարարութեան մասին գէթ փոքր ի շատե՛ տեղեկութիւն իմանալու փափագող ազգայինք, յուսամք որ հաճութեամբ պիտի ընթեանուն նորընտիր նախարարաց գլխաւորներ-

րու կենսագրութեան հետեւեալ համառօտագրի զգալիներն, զոր Սօլէյ անուն գաղղիական թերթէն քաղելով կը հրատարակենք :

Պ. ԿԼԵՏՈՒԼԵՆ  
Առաջին նախարար

Սոյն Պետական անձին քաղաքային կեանքն արդէն հանրաձայնութիւն է, և անկարօտ նկարագրութեան : Իբրև Նիւ-Մարքի երեսփոխան Հասարակաց խորհրդարանը մտաւ 1832ին և հետզհետէ երեսփոխան ընտրուեցաւ Օքսֆորտի համալսարանին կողմէ, հարաւային Լանքայրի կողմէ, կրիսիլի կողմէ, և այս անգամ Միտ-Լոթի իրնի կողմէ : յաջորդաբար կառավարական պաշտօններ վարելով հանդերձ, սոյսինքն Գանձային լորտ, գաղթականութեան նախարարութեան խորհրդական, առևտրական նախարարութեան խորհրդական, ելմտական նախարար, և առաջին նախարար : Պ. Կլէտտիլը հասարակաց իրաւանց վրայ գործող աշխարհի ամենէն բեղմնաւոր գրողներէն մին է : Հոմերոսի վրայ ըրած իւր գեղեցիկ երկասիրութիւններն ընտիր հելլենագիտի համբաւ տուած են իրեն իրաւամբք : Եւ ահա այս տիտղոսով է որ կը սկսի համարարանին տնօրէնութեան բարձր պաշտօնին հրաւիրուեցաւ : Ծնած է 1809 Հոկտեմբերին, հետեւաբար 79 տարեկան հասակին մէջ է, համայն և այնպէս իւր մտային և մարմնաւոր ոյժերը տակաւին կատարելագոյն կը վայելէ : և այս անգամ ստանձնած երկու, սոյսինքն առա-

ջին նախարարի և ելեմտից նախարարի պաշտօններն եռանդուն կերպիւ վարելու ամեն պատրաստակունութիւնն ունի : Պ. Կլէտտիլը իւր 48 տնորուան անընդհանու վարած մեծ պաշտօններուն, և իւր բարձր արժանեաց հակառակ բընաւ չէ կամեցած անգլուականութեան անսիրտաններ և պատիւներ ընդունիլ :

ԼՈՐՏ ԿՐԱՆՎԻԼ  
Արտաքին գործոց նախարար

Այս անգամ անգամ չէ որ լորտ կրանֆիլ արտաքին գործոց նախարարի ծանր պաշտօնը կը վարէ, այն որ խորհրդարանական մրցումներու մասին հիւստիոյ վստակաւորներէն մին է : Բնանամեայ հասակին մէջ, այն է 1835ին Բարիկի դեսպանատան կցորդ անուանեցաւ, և յաջորդ գարին Մորթիթ քաղաքէն երեսփոխան ընտրուեցաւ, տարի մը ևս անցնելէ զինի կրկին վերադարձաւ : 1840ին արտաքին գործոց նախարարութեան խորհրդական եղաւ : Հորը մահուան վրայ 1846ին լորտերուն խորհրդարանը մտաւ, և 1848ին առևտրական նախարարութեան խորհրդական կարգեցաւ : Յետոյ 1851ին Գեիտեմբերի մէջ Նարթէոն Գի պետական հարուածին վրայ, լորտ Բարմլենթընի յաջորդեց իբրև արտաքին գործոց նախարար : 1853ին նախարարութեան մէջ խիստ բարձր դիրք ունեցաւ իւր վարած պաշտօններովն, որք են, թագաւորական տուարներու վերակացու, բանակի ընդհանուր գանձապետ, Լանքայրի գլուխ-

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ռուսական դեսպան Պ. Տը Նովիբոֆ մայրաքաղաքս ժամանելով, ի պաշտօնէ վեհ. Սուլթանին ներկայացաւ և երկուստեք խիստ մտերմական բանախօսութիւնք տեղի ունեցան սոյն տեսակցութեան մէջ : Յետոյ Պ. Տը Նովիբոֆ և թուրքիոյ արտաքին գործոց նախարար Սալաբաշա Բ. Դուռն և Ռուսական դեսպանատունն պաշտօնական այցելութիւններն ըրին :

— Գաղղիական առժամանակեայ դեսպան Պ. Թիսօ ևս իւր պաշտօնական այցելութիւններն կատարեց :

— Բրիտանական նորընտիր դեսպան Պ. Կոչըն, որ Բարիզէն վիեննա հասած ժամանակ, Աւստրո-Հունգարական արտաքին գործոց նախարար Պ. Հայմերլէի հետ տեսակցած, և գաղափարաց մասին ըստ ամենայնի համաձայն գտնուած էին, անգղիական Հելլենոն անուն արքայական շոգե-նաւով Թրեստէն մեկնելով հասաւ ի Պոլիս :

— Մօնթէնէկոյի տրուելիք տեղերու խնդրոյն մէջէն ծագում առած ալպանական ապստամբութիւնն կ'երեւի թէ՛ երթալով որոշ կերպարանք կ'առնու : Իտալական սպայներ ալպանական բանակներու մէջ կը գործեն, հայրենասիրական միութիւններ իրար կաշակցին, ղէն ի ձեռին ինքնօրինութիւն կ'ուզեն, պատերազմի պատրաստականութիւն ցոյց կուտան, օրական ծախքերն ձրի մատակարարելու խոստումներ կ'ըլլան մի քանի հարուստ ալպանիացիներու կողմէ : Արդէն Հօսօ պէյի և Ալի բաշայի ստորագրութեամբ և Մայիս 10 թուով Շքօտրայէն համայն ալպանացոց ուղղեալ յայտարարութիւն մի ինքնօրէն կառավարութեան ձևեր կը խնդրէ և առ այս վեհ. Սուլթանին հաւանութեան կը դիմէ : Կըսուի թէ՛ սոյն դժուարութիւններն լուծելու համար Բ. Դուռն մտադիր է Հէրսէքի կողմէ փոխարինութիւն ընել Մօնթէնէկոյի :

— Մեծանուն Պ. Ե. Չարիֆի թաղսիմի յունական եկեղեցոյն շինութեան համար 200 ոսկի, և Պ. Սթէֆանովիչ 100 ոսկի նուիրեցին :

— Ասիմ բաշա և Ապրօ էֆէնտի Բ. Դրան Ենրկայացոցիչք պիտի լինին առաջիկայ շաբթու գումարուելու Արևելեան յանձնախումբին մէջ :

— Եգիպտոսէն եկած լուրերն կ'իմացնեն թէ մօտերս բարձրա. Խըտիմ և Պոլիս պիտի գայ իւր իշխանական արտոններն ընդունելու :

Նորին քացակայութեան ժամանակ վսեմա. Շէրիֆ բաշան փոխանորդական պաշտօն պիտի վարէ :

Թեան տեսուչ և ծովային գործոց գանձապետ, և որ առաւել բարձր դիրք մի տուաւ իրեն նոյն տարին գումարուած վեհապետական խորհրդին նախագահի պաշտօնն : Երկու տարի ետք լրտերու խորհրդարանին մէջ ազատականաց պաշտօնական գլուխ եղաւ : 1856ին թաքուհին իրեն յանձնեց Ռուսիոյ կայսեր թագազորութեան հանդիսին զինքը ներկայացնելու փափուկ պաշտօնը : Յետոյ 1859ին Տէրպիին հրատարակուած վրայ իրեն յանձնեց նոր նախարարութիւն կազմելու գործն : Լորտ կրանվիլ չյաջողեցաւ այդ գործը գլուխ հանել, բայց լորտ Բալմէրսթընի նախարարութեան մէջ վեհապետական խորհրդոյ նախագահութեան պաշտօնը վերստին ստանձնեց, և որոյ մահուանէ զկնի, այն է՝ լոր ճօն Բուսէլի առաջին նախարարութեան ժամանակ նոյն վեհապետական խորհրդոյ նախագահի պաշտօնը շարունակեց : Պ. Կլէտսթընի նախարարութեան մէջ 1863ին գաղթականութեանց նախարար եղաւ, և 1870ին իբրև արտաքին գործոց նախարար յաջորդեց լորտ Բլէրքընտընի : Եւ ահա այս պաշտօնով էր որ Ֆրանքօ—Գերմանական պատերազմին մէջ Պէլճիոյ չէզոքութեան յարգուելը տրամադրող երբակի դաշնագիրն ստորագրելու առթիւ նշանաւոր դեր մը խաղաց : Լորտ կրանվիլ նոյնպէս կարևոր դեր մի ունեցած է աշխարհահանդէսներու կազմաւորութեան մէջ : Լոնտոնի մէջ 1851ին բացուած աշխարհահանդիսին դեր—նախագահ. իսկ 1862ին աշխարհահանդիսին նախագահ եղաւ : Նոյնպէս

ԱԶԳԱՅԻՆ

Հետեւեալ ազգագուտ լուրը Մասիս առնելով կը հրատարակեմք :

ԱԶԳԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՀՅՁՈՒՄԴԵՊ ՕՐԻՆԱԿ ՄԸ

Ս. Պատրիարք Հայրը Սիվրիհիսարի մէջ իւր քսակէն 2000 լիրա ծախք ընելով ազգային վարժարան մը կառուցանող Մեծ. Յակոբ աղա Ներսէսեանին հետեւեալ օրհնութեան նամակը գրած լինելով, ազգիս հարուստներուն օրինակ մը լինելու համար արժան կը համարիմք պատճէնն հրատարակել :

« Մեծապատիւ Ներսէսեան Յակոբ էֆէնտի, «Օրհնութեամբ խնդալ ի ֆրիստոս :

« Ուրախութեամբ լսեցի որ ազգասիրարար 2000 լիրա Ձեր անձնական քսակէն ծախսելով ազգային վարժարան մը կառուցեք էք ի Սիվրիհիսար Ձեր հայրենիքը, և հիմա ալ նորա յառաջադիմութեանը կաշխատիք եղեր :

« Օրհնեալ Սիրելի, այս դարուս հոյակապ Հայերէն պատուական հայերէն մին էք դուք և գլխաւորադոյններէն մին, զի ազգին համար տմենէն պիտուական բանք ըրած էք, ազգին հոգի և կեանք տող բարերարներէն մին հանդիսացած էք, իմաստութեան հանճարոյ և գրթութեան հոգւոյն հրեշտակն էք դուք : զՁեզ անձամբ չեմ ճանչնար, քացց մարմինեդ յառաջ հոգիդ կը ճանչնամ քոյդ կենսատու գործովդ :

« Ապրիս շատ ի կենցաղումս, որպէսզի հետեւին ամենքն ալ քու սիրալի օրինակիդ, բայց անշուշտ պիտի ապրիս ազգակցացդ և մարդկային սեռին սրտերուն մէջ յաւիտեան :

« Քու ցանած սերմանիքդ՝ քեզի համար անմահութիւն և երախտագիտութիւն պիտի պտղաբերէ, իսկ հայրենեացդ զաւակաց համար լոյս և կատարելութիւն, այո՛ այս աշխարհիս համար միայն՝ իսկ ի հանդերձելումս ի դպրութեան կենաց պիտի արձանագրուի անունդ՝ հանճարոյ հոգւոյն և Բանին կենաց մատամբն, և քանի որ դպրոցդ պաղարեք կը ընտանէր՝ ազգասէր և գիտնական զաւակներ, Դուռն անոնց օրհնեալ հայրը պիտի հռչակուիս յերկրի և յերկինս :

« Ձգիտեմ թէ մեծատուն մ'ես կամ ոչ, եթէ առանց մեծատուն լինելոյ կանգնեցիր այս դըպրոցը, դու երանելի պիտի ըլլաս ի քառս մեծատանց, և յաղթող անոնց պերճութեան և ճոխութեան մէջ և քու անունդ ստուերած պիտի ամէն շատերուն վրայ :

Բարիզի և վիեննայի աշխարհահանդէսներուն մէջ անգղիական յանձնախումբերու վարած նախագահութեան պաշտօնովն ամեն ուրեք բարեկիրթ ազնուականի յիշատակը իրողոց և իւր մեծ հարստութիւնն տպուածապէս ի գործ դրաւ : Երկար ժամանակէ ի վեր տեսուչ է Լոնտոնի համալսարանին, ուր իրական սեռէ ևս աշակերտներ ընդունելու խնդրոյն յառաջացան մէջ բաւական մաս մ'ունեցած է : Լորտ կրանվիլ 1815ին ծնած է : Հետեւաբար 65 տարեկան հասակին մէջ է այժմ :

ԼՈՐՏ ՀԱՐԹԻՆԹՐՆ

Հասարակաց խորհրդարանին ազատական պարագլուխներէն մին, որ Հնդկաստանի քաղաքական վարչութեան դժուարին և փափուկ պաշտօնն ստանձնած է Անգղիոյ նորակազմ նախարարութեան մէջ, այսօրուան օրս երիտասարդ անձ մի է որ տուալիկայ Յուլիս 23ին 47 տարեկան պիտի ըլլայ, թէպէտ 1857էն ի վեր անընդհատ երեսփոխանութեան պաշտօն կրկարէ խորհրդարանին մէջ : Իւր պաշտօնավարութեանց մէջ սկիզբէն ի վեր կարող եղաւ զօրաւոր դիրք մի ունենալ, և նոյնինքն էր որ 1859ին առաջարկած անվտանգութեան քուէովը լորտ Տէրպիի գահիճը տապալեց : Երբ լորտ կրանվիլ պաշտօնով Բէզէրպարի գնաց, լորտ Հարթինթըն անոր հետ էր : Լորտ կրանվիլ լաւ ճանչցաւ երիտասարդ երեսփոխանին մտաց հասունութիւնն ուստի և անոր տաղանդը յերևան

իսյ է մեծատուն ես և ի յաւ և այ ընչիցդ ըրիր այդ բարերարութիւնը, դարձեալ մեծ և բարի մտող մ'ես, օրհնեալ Հայ մ'ես և դարձեալ շատերէն գերազանց, օրինակ ուսիւար առաքինութեան և ազգասիրութեան : « ամբուրելով գրեզ Աստուծոյ օրհնութիւնն անսպառ օրհնութիւնն հայցելով քու և ընտանեացդ վայ »

Մնամ միշտ աղօթարար Պ. Կ. Ներսէս Եպիսկոպոս :

Ամեն Մկրտիչ Խրիմեան սրբազանն վանայ Առաջնորդ ընտրուեցաւ : Կ շնորհաւորեմք վանայ ազգայիններն որ արժանաւոր առաջնորդի մը խնամոց սերքե արածուելով յառաջադիմութեան շաւղին մէջ մտնելու արդիւնքն պիտի ունենան, եթէ երբէք իրենք ևս բոս կարևոր հրահանգաց իրենց ս բազան Առաջնորդին վարուին : Կը շնորհաւորեմք նաև Ամենախրիմեան սրբազանն, որ իւր բնաբոյս հայրենասիրութիւնն յագեցնելու բաւական մեծ ասպարէզի մը մէջ մտաւ : Այս կ'ըսեմք յիշելով սրբազան Հայրիկին այն հայրենասէր զգացմունքն, որ Պատրիարքական գահուն վրայ բազմած ժամանակն անգամ « Նորին Պատրիարքարանի դուռը կապուած և կ'երևակայէր : Նմանօրինակ ըզգացմամբ և յուսով ի եմք նաև կարնոյ նորընտիր Առաջնորդ Կ. Տ. Սալաբաշա Մ. վարագապետ Օրմանեանի, և կտրնոյ ազգայնոց մասին : — Հայրենի՛ շաբաթ Թեթիսին մէջ Մայիս 10 թուով կը կարգուի :

Յաւօք սրտի տեղեկացանք թէ վեհեակի Մխիթարեան Մխարանութիւնը Մուրատեան վարժարանը որ Հայոց ազգին կը պատկանի, վերջապէս ծախսեր է բաւական տարիներէ ի վեր, արդէն մեծ ջանք կը կրկար յիշեալ վարժարանը վաճառելու համար, և եթէ չենք սխալիր, երկու տարի առաջ Ս. Պատրիարք Հայրը այս խընդիրը ազգային ժողովոյ ատենաւ բերաւ, ուր սրտառուչ ատենախօսութիւններ եղան և Գեր. Նար—Պէյ սրբազան յայտարարեց թէ գաղղիացի երեւելի փաստաբան Պ. Փիլիճպարի հետ տեսակցելով ինքը անոր կարծիքն ստացած էր, թէ Մուրատեան վարժարանը բովանդակ Հայոց ազգին կը վերաբերի և թէ Մխիթարեանք ըստ կտակի արամադրութեան լոկ հսկող են և իրաւունք չունին զայն գրաւելու :

Ասոր վրայ յատուկ Մասնաժողովը կազմուեցաւ խնդիրը քննելու և միջոցներուն վրայ խորհելու համար, սակայն անկէ ի վեր բարձի թողի եղաւ մինչև որ վերջապէս վարժարանը ծախս

ածելու օգնեց : 1863 Մարտ ամսոյն մէջ լորտ Բալմէրսթիին նախարարութեան մէջ մտաւ իբրև ծովային պաշտօնատան լորտ, և ամիս մը ետք պատերազմական նախարարութեան խորհրդական եղաւ, 1866ին Բուսէլի առաջին նախարարութեան ժամանակ պատերազմական նախարար անուանեցաւ : 1864ին Պ. Կլէտսթընի պաշտօնատան մէջ թղթատարութեանց նախարար էր, ետքը 1871ին Երլանտիոյ վարչութեան ընդհանուր քարտուղար անուանեցաւ նախարարութեան անդամակցութիւնն պահելով հանդերձ : Երբ Պ. Կլէտսթըն 1874ին հրաժարեցաւ ազատականաց դուլիս լինելէ, ազատական կուսակցութիւնն միահամուռ պարագլուխ ճանչցաւ լորտ Հարթինթըն, և ամենու յայտնի է թէ՛ սա իւր փափուկ և դժուարին պաշտօնն օրպիսի ճարտարութեամբ և օրինաւորութեամբ կատարեց : Լորտ Հարթինթըն միանդամայն Էտիմպուրիկի համալսարանին Տնօրէնն է : Տըվընչայրի դ. քիւն որդին և ժառանգը լինելով հսկայական հարստութեան տէր է, և մինչև ցարդ չէ ամուսնացած :

ԼՈՐՏ ՍԵԼՊՈՒՐՆ

Անգղիոյ այս մեծ խորհրդականը երբեմն Բառն տէ Բալմէր կուռած, գիւղի հովուի մը ջրորդ որդին լինելով ճիշդ իւր աշխատանաց դուռակն է : Օքսֆորտի համալսարանին մէջ զարմանալի յաջողակութեամբ ուսման ընթացքը կատարեց և համալսարանական մեծամեծ ու նախանձելի

ուեցաւ և ազգք քանի մը... Ահա մեր վիճակը, որմէ կրնայ հետեւիլ մեր բովանդակ ազգային կեանքը:

Հանապազօրեայ և վեհանձն բարեգործութիւններով անաւոր յոյն սեղանաւոր մեծուն Պ. Զարիֆի այս անգամ Պրուսա դըտնած ժամանակին տեղոյն Առաջնորդ Գերբարդուղիմէոս սրբազանի կողմէ ի պատիւնորին Ազնուութեան տրուած կառնքին մէջ տասն և երեք տարեկան աղքատիկ Հայ պատանի մը տաճկերէն յատուկ ուղերձով խնդրած է որ վարժարան մի մտնէ իւր ուսման փափագը իրացնելու համար: Նորին Ազնուութիւնն գովելով պատանուոյն արդարացի առաջարկութիւնն անմիջապէս Կ. Պօլիս բերել կուտայ և Օրթա գիւղի Գուրգէնեան վարժարանը կրղնէ հայրաբար անոր բոլոր պէտքերն հոգալով մինչև ցաւարտ դպրոցական շրջանին:

Որչափ ուշիմ պատանիք աղքատութեան պատճառաւ անուսումն կրմեռնին:

Մեղ- Հայաստանի թերթին վերջին թուոյն մէջ կրկարդամք:

Ամոցս 12ին հանդուցեալ Գարբիէ Արքեպիսկոպոսի դիակը 11 ժամին առաւօտեան հանդիսաւոր կերպով առաջնորդարանից տարան մայր եկեղեցին, ի ներկայութեան բոլոր եկեղեցական դասի ու խուռն բազմութեան հայազգի և օտար ժողովրդեան: Միւս օր, ծագկազարդի կիրակիէ օրը 11 ժամին սկսաւ Ս. Պատարագն և օծման հանդէսը, Պատարագին և օծոյն էր Երուսաղէմի միաբան սրբազան Երեմիա եպիսկոպոսը, որ և համառօտ, բայց ազգու ճառ խօսեց որով ցոյց տուեց թէ հանգուցելոյ նշանակութիւնն ուսումնական կողմից և թէ նորա լաւ յատկութիւններն ու քաղցր քաղաքավարի վարմունքն յարգարեութեանց մէջ:

Թաղման հանդէսն, որ մեծ շքով կատարուեցաւ տեւեց մինչև երեք ժամը կէսօրից յետ: Բոլոր արական և իգական դպրոցների աշակերտ և աշակերտուհիք իրանց ուսուցիչներով և վարժուհիներով վաւած մոմերով հանդիսակից էին: Բազմութիւն աստիճանաւորք և պատուաւոր ժողովրդականք, արք և կանայք լցուած էին թէ մայր եկեղեցու դաւիթն և թէ շրջակայ տների պատշգամբներն ու տանիքները: Գերեզմանի վերայ Ներսիսեան դպրոցի հայկաբանութեան ստուցիչ Մեծ. Պ. Մ. Պալեանը կարգաց յարմարաւոր ճառ գրաբառ, ցոյց տալով հանգուցելոյ

պատիւներու արժանացաւ: 1837ին ատենական ասպարէզներու մէջ մտնելով ընդ փոյթ մեծ անուն հանեց, և 1849ին թագուհւոյն խորհրդական անուանեցաւ: Բիւմութ քաղաքի ընտրողք արք զինքը Խորհրդարան զրկած էին, երկու տարիէ ետք 1853ին կրկին զրկեցին զանի անդ: 1861 Յունիսի առջի օրերը լրտա Բալմէրթն դատական ընդհանուր վարիչ կարգեց զինքը, քիչ մը ետքը Բիւմութ քաղաքի կողմէ երեսփոխան բնարուեցաւ: 1863ին զօրապետ, իսկ 1868ին Պ. կլէտսթնի կղերական քաղաքականութեան հասցեւորն մերժեց անոր նախարարութեան մէջ պաշտօն ընդունիլ, և տեսնելով որ իրլանտիոյ պաշտօնական եկեղեցիի բարձուը քուէի կը դրուի, այլ ևս չպնդեց իր մերժումը ինչատեն որ լրտա Հաթիբէի մահուամբ 1872ին նորա տեղը բաց մնացած էր: Տարի մը առաջ արգէն Արապմայի խնդրոյն լուծման համար ժընէվ գումարուած ժողովին մէջ Անգղիոյ ներկայացուցիչն եղած էր: Իւր կուսակից նախարարութեան անկումէ ետք Պ. արք Օէլպուրն պատուանունով շարունակեց իւր նիստերն լրտերու մէջ, և որոց նիստի երկրորդ բացման ատեն պիտի նախագահէր: Լորտ Օէլպուրն վաթսուն և ութ տարեկան հասակին մէջն է, արգէն բազմութիւն երկասիրութիւններ հրատարակած է, և Սէնթ Անտրէ համալսարանին Տեսուչն է: Բոլոր Միացեալ-թագաւորութեան մէջ երկու կամ երեք դիւանօր իրաւագէտներու մէկը ճանչցուած է ամենայն իրաւամբ:

(Պիտի շարունակուի)

խնամքն առհասարակ դպրոցների վերայ: Թաղման կարող կատարելուց յետ եկեղեցական դասընթաց առաջնորդարան ուր նորա համար սեղան էր պատրաստած:

Ս. Էլմիածնի Արքա ամազգրի Ապրիլ ամսոյ թուոյն մէջ հետեւեալը կրկարդամք:

Թագաւոր կայսեր քսանհնգամեակի նշանաւոր Վեհափառ կաթողիկոսը շնորհաւորական նամակով մատոյց Նորին Մեծութեանը հայերէն հին ձեռագիր Ս. Աւետարանը շատ լաւ պահպանված մագաղաթի վերայ գեղեցիկ գրված և պատկերազարդ: Աւետարանը յիս կամ յիս դարի ձեռագիր կհամարվի:

Աւետարանը շատ սիրուն կերպով դարգարված է տնօրինական և ուրիշ ընտիր պատկերներով, կազմի երեսակողմի արծաթապատի շորս անկիւնում քանդակված են Թագէտս և Բարդուղիմէոս առաքելները, Գրիգոր Լուսաւորիչը և Մեսրոպ թարգմանիչը: Աջակողմը Գրիգոր Լուսաւորիչի աջն է, ձախակողմը—Գեղարդը, իսկ կողքերում—կաթողիկոսական գաւազաններ: Մէջ տեղը գծադրված է մինչև Ս. դաստառակը: կազմի վերջակողմը շինված է շատ գեղեցիկ և ճշգրտութեամբ Էլմիածնի պատկեր:

Իւր նստակը և ընծայն վեհա. Տէրը մատոյց ներքին գործերի նախարարի միջնորդութեամբ և նախարարից պատասխան ընդունեց Մարտի 11ից, որով նախարարը կյայտնէ, որ Ն. Մեծութիւնն առանձին իմն բարեյօժարութեամբ ընդունելով նամակում յայտնված զգացմունքը և բարեմաղթութիւնները, ճշմարիտ յախորժանքով բարեհաճեց ընդունել մատուցված սրբազան ընծայն: Եւ թէ Թագաւոր կայսր բարեհաճեց պատուիրել նախարարին յայտնել վեհակաթողիկոսին Նորին Մեծութեան հոգեկան երախտագիտութիւնը:

Ինչպէս խոտոյցած էինք կընդարարակեմք ի նպաստ սովելոյ Հայաստանի հանգանակութեան հեռեւեալ ցուցակը, որ օտարազգաց զիմելու համար կազմեալ Մասնատնօղովայ աշխատութիւն կատարուած է: Սոյն Մասնատնօղովայ անդամաց անուանքն արդէն հրատարակուած են Արշալոյս 1141 թուով:

Գեր. Տ. Միւլի. եպիսկոպոս Մուրատեան 50, եղբարք Սպարթալեանք 100, Կ. Մ. Պալեոզեան 100, Եսայեան 100, կարապետ Արապեան 50, Տօթթօր Պ. կոստանը 25, Խաչատուր Զաքիեան

- ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ ՊԵՐՈՆԵՃԷՆ
ՓԱԹՈՐԻԿ
Սիրուն տղաք բռնեցէք պար.
ձեր տարիք
կըվանկ փոքորիկ.
վառեալ յուսով գոաւրբաբար,
երգեցէք գուգապար:
Փոքր աղջկունք, պզտի տղաք,
Դաս և դպրոց մոռնալով,
կանաչ ծառոց շուքին տակ
Պարել կուզէք երգերով:
Ի զուր նոր պատահար
Վրդովէ խեղճ զախարհ
Շանթն ի վեր որոտայ
Դուք դրէք պսակ ծաղկեայ:
Սիրուն տղաք բռնեցէք պար...
Կըպատառէ կամպ փայլալ,
Բայց չի դպաւ ձեր աչաց,
Լուռ ի տերեւս կայ թռչնակ,
Սոյնք չեն խոչ ձեր նուագաց:
Հաւատամ ուստի ձեր
Հրճուանաց. երկին զուտ
Բոցափայլ ձեր աչեր
Յոյացնեն պկապուտ:
Սիրուն տղաք բռնեցէք պար...
Նախնիք վշտեր ունէին.
Մի մատնուիք նոցա պէս
Այ ձեռն փշէր չլիթանին,
Զախն հայրենեաց լուծէր վրէժ:
Յաղթական կառքերէն
Ինկած վեհ ձեր նախնիք

35, Հայնց 25, Պարրի և ընկե. 50 Թ. Է. Բսիաքի 50 Հ. Յրէտէրիչի 25. Յ. Բէտէօյլ 25, Բ. Հովեր 20, Մ. Ա. Կրո 10, Ռալի 25, Եղբարք Պէլոմ 25, Ա. Ֆարքաս 10, Շ. Սալլանի 20, Բոճի և որդիք 20, Ճ. Հօնիչէր 20, Է. Տալի 20, Ապպոդ 15, Լոքնէր և Մարքօրոյի 15, Ռեճի և Պէլոմ 15, Եղբարք Գրամէր 15, Եղբարք Ալիօդ 25, Բէյլէր և ընկե. 5, Ռուէկ 20, Չէքքինի 10, Բսէնորուլ 10, Բ. Սբէրքօ 5, Ա. տ'Անտրիա 15, Սէպա և Սոււմ 20, Սօլարի և Պալատուր 10, Ժիւստինիա և որդիք 10, Բադէլաս և ընկ. 20, Բուզինիէրի և որդիք 20, Վաթէի և Ստալիտի 5, Տընիճ, Մ. ար Բէլիսիէ 6, Եղբարք Իքար 10, Եղբարք Պարի Յ. Ֆիդաս և ընկ. 10, Բ. Պրինման 10, Ճօլի և ընկ 10, Բ. Ալիօդի 10, Ժ. Թօրուզ 10, Է. և Բ. Նարիկ 10, Էլի Էքքաշ 25, Ժ. Սոււմ 10, Տ. Լամպոլլու 15, Է. Ալանօլլու 20, Ժ. Վ. Է. Օմանեան ուի 2, Գեր. Ա. Թիմօնի Օմ. ուի 2, Ժ. վիթէլ նոյն 20, Ֆօլպիս նոյն 10, Թ. Թէլլու ալդ. ուի 2, Հէրֆէլա ֆրանս 40, Ֆիլիբոլիչ ֆրանս 10, կուպէրնասիա ֆր. 40, Սալէդրա ֆրանս 46, Ռուս. նաւուց ընկ. ֆր. 250, Թորամանօլլու ուի 20, Մարդի ի Արտի 10, Հ. Տէքօրու և ընկ. 10, Հէֆիլի և Սբէլէր 20, Ա. Գասապօլլու 25, Ալէք. Սիւր 50, Արժի և որդի Բօլիդի 20, Ա. Գէպպօլլու 15, Գրիստօֆ Հէքիճօլլու 10, Եսէքօ Բէնեմէն 5, Հապիֆ և Բօլաքօ 15, Եղբարք Լադքանի 15, Փէլլալալէքօլլու 5, Խարալամպօ Բէյա 10, Գարլօլլու և ընկ. 15, Ն. Ալաճաճիօլլու 10, Մօլի Մորդօ 10, Եօրեի Աքաշ 20, Եսայի Ըլըբեան 20, Եօլանի իլիատիս 10, Բ. Եօրիկատիս 10, Է. Վալէլ 10, Թօրուզ և Տրաքօրիչ 20, Թ. Եուսուֆեան 100, Ռ. Շէյթիլին 20, Ա. Գ. Վէմեան 5, Եղբարք Գասապօլլու 20, Շէքէֆէտիլնօլլու 10, Մ. Ն. Էմմանուէլ 10, Ժ. Սիտի և ընկ. 10, Եղբարք Աւետիքեան 50, Բ. Բանաէլէճն 10, Ն. Իլիատի 10, Կ. Ակատօրուլ 10, Յ. Պալատուր 5, Անդաքի 5, Ակորճան Պալքեան 15, Չոպանօլլու 10, Միլանաքի 10, Տիվըրս 16, Է. Խաչատուր 15, Տ. և Մ. Բօճէն 15, Նիսիմ և Տ. Թարանթօ 50, Պուրնէն և ընկ. Օմանեան ուի 3, Անտիոն 10, Բէքօլիչ 3, Ն. Յ. Վանտէրզէ 10, Ալէվրա 3, Անանուն 6, Եղբարք Արախչինճի 10, Ժան տ'Անտրիա 5, Ժ. Պ. Ռուզիէ 5, Ա. Օ. Բլարք 50, Բ. Անթինօթէնիս 15, Ժ. Ժ. Մայնէդի 10, Տ. Բիւրէճիօլլու 15, Բօդաքի Էֆէնատի 10, Ա. Պօնալ 5, Գրիստօլլու Վէրիօ 4, Ալմանասիատի Եօրտան 4, Թամինճի 2, Աւտրիական Լոյտ ընկ. 50, Մ. Խրուսաքի 25, Ա. Արէալի 10, Գ. Ա. Գա

Զայն փառք ձեզ կտակեն,
Որով են երջանիկ:
Սիրուն տղաք բռնեցէք պար...
Տխուր բարբառք սրբնդաց
Աւազ բացին ձեր աչեր.
Սա ձայն փողոյն էր խուժաց,
Ար զկորանս մեր դուժէր:
Թշնամոյն երբ զէնքեր
Գանդէին մեր յարկեր,
Զեր ժպիտն առաջին
Խառնէիք մեր վշտին:
Սիրուն տղաք բռնեցէք պար...
Պիտի յաղթէք վշտերու,
Ուր ոյժ հատաւ մեզ համար,
Եւ չդարձանք փորձառու:
Մինչ որ եղանք շանթահար:
Ուսուած, որ ձեզ սիրէ,
Երբ կամի մեզ պատժել,
Զեղ համար կըցանէ
Ապագայ մեծ դաշտեր:
Սիրուն տղաք բռնեցէք պար...
Բանալունչն այն փոթորիկ
Բախտի ցասում դուշակէ,
Յորմէ ստկայ իմ տարիք,
Այլ ձեզ բնաւ ոչ ազգէ,
Թէ մեռնիլ ես պարտիմ
Երգելով մեր վշտեր,
Սփռեցէք յիմ շիրիմ
Զեր ծաղկեայ պսակներ:
Սիրուն տղաք բռնեցէք պար...
ՊԵՐՃ ՕՀԱՆՍԱՆ
Աշակերտ Ս. Մեսրոպեան վարժարանի

րավա 4, Հ. Ճամբարազու 10, Մարտի 1, 1871, Ա. Լասքարիս Օ.Տ. 1, Ռ. Ռոշ 1, Գ. Պուպի 3, Համագումար արձաթ մեծիս 2497



Հնդկաբնակ ազգայիններէն մեր գերանդինը բարեկամ Մեծ. Պ. Գ. Գալստան բերկրութեամբ սրտի կ'աւետէ իւր ամուսնութիւնն ընդ Քարօլինա Մարթա շնորհալի գտեր Մեծ. Պ. Յովհաննու Յարաթուն և աղնուափայլ Տիկնոյն, որ և առղի ունեցած է ուրբաթ ի 21 Մայիս տարուոյ ըստ նոր տուժարի, յետ կիսաուր ժամը 6ին ի հայկական սուրբ Եկեղեցւոյ ի Պատճառաւ Արշալոյս Արարածան, որ իրաւունք ունի պարծեղը ընդ վաղեմի մտերմութիւն աղնուական ծնողաց նորապսակ ամուսնոց որպէս և ընդ նոսին ինքեանս, նուիրական պարտք համարի շնորհաւորել սոյն սիրայոց Պատկի հանդէսն, և բարեմաղթել երկար և երջանիկ կեանս նորապսակ փեսայի և Հարսին նոյնպէս և նոցա երջանիկ ծնողացն:

ՈՒՂԵՐԶ

Չեղ շնորհաւոր լիցի Պատկի Չեր անրիծ: Աստուածազոյգ ամուր կրկին շնորհալից, Հովանացի բղջեօք Ալ Տեառն Զօրութեանց, Պահնէ անփորձ դառնածաշակ ի վշտաց: Նոր ձիթեմի պտղովք բարեաց լիւն ի Տան Հայկայ պայծառամիջ փութիլ: Տեսիլք զորդին որդոց ձերոց սիրունակ լինել ազգիս շուք և պարծանք և պըսակ: Պերճ Գալստան ընդ Քարօլին Մարթայի, Հանդոյն նախնաց որ ի գրախտին Ադեմի, Երեմիովայրս յանոյշարայր գրգարան Բարդաւանեալ երջանկամիջ յաւիտեան: Օրհնեն ըզձեզ բարձունք երկնից և երկիր: Օրհնեն ըզձեզ և Տուն Հայկայ յունալիք ի ձեզ խնդրել գէթ ըզմի մասն իւր փառաց վերականգնիլ ի դարաւոր կորանաց:

ԽՈՒՄԿԻՐ ՏԵՐ

Չեր հայրենասիրական նախորդ թերթին մէջ յիշած էինք ազնիւ Զմիւռնացւոց Տարօնոյ մէջ բացուելիք երկրագործական դպրոցին համար ունեցած օգնութեան փափագը, կը յուսամ թէ կրկին պիտի հաճիք ձեր պատուական թերթին մէջ անկիւն մը շնորհել մեզ, յայտնելու համար նոյն օգնութեան և փափագանաց նուիրագործութիւնը: Գաղաքականացեալ ազգաց մէջ ընդունելի ճանչցուած բան մըն է թէ նահանգական դըպրոցի մը համար մատենադարանի թանգարան մը պէտք է և այդ պէտքն մեծ կարևորութեան կը փոխուի, երբ որ Տարօնոյ պէս ազգատիկ նահանգի մը վրայ կը մտածուի, որ հազիւ ուրեք կը ծախան հին գրքերէ ի զատ ուրիշ ուսումնական գրքեր կը գտնուին: Զայս խորհելով, քանի որ եր յառաջ համարձակեցայ սոյն փափագս տեղւոյս ազգասէրներէն ոմանց յայտնելու, որոնք իրենց ազնիւ կամեցողութեամբ ոչ միայն փափագս չմերժեցին, այլև առատ նուիրատուութեամբ իրականացուցին, և կարճ միջոցի մէջ քառասունէն աւելի անձինքներէ մօտ 350 կտոր գրքեր և տետրակներ ընդունեցայ որոց իւրաքանչիւրին անունները, և նուիրած զրոց ցանկեր և տքէն յատուկ ապագրեալ տետրակի մէջ պիտի հրատարակենք: Եւ հիմա այս յայտարարութեամբս կ'ինքրեմք որ Տարօնոյ մէջ բացուելիք դպրոցին և թանգարանին համար մեր հայագրի ազնիւ պարտաւոր և տիկնայք բարեհաճին իրենց նուէրներն և անմուռաց յիշատակներ յաղարկել Ս. Ստեփաննոս եկեղեցւոյ քահանայից խուրը, ուր պէտք երգած յիշատակութիւնն պէտք է արձանագրուի յատուկ տուժարի մէջ:

Ս. Յակոբ Ղևոնդեանց Տարօնցի

ՏԵՂԱԿԱՆ ԵՆԻՔԻՔ

Գաւառիս ընդհանուր կառավարիչ վսեմա Համոս բաշան իւր այցելութիւններն կը շարունակէ ի շրջակայս ուր ուրեք որ նորին հսկողութեանց պէտք կայ: Նորին վսեմութիւնն կրկին անգամ շրջակայութեան ելաւ Թիւրէ: Պայքնոր և Էօտեմիլի կողմերը, և վերագարձաւ:

—Վսեմա Յակոբ Էֆէնտի Սպարթալեան հանգերձ ընտանեօք օգտափութեան համար իւրոպա ուղևորեցաւ, ուր երկու ամսոյ չափ ժամանակ մնալէ վերջ մտադիր է վերագառնալ ի քաղաքս: Վսեմա Յակոբ Էֆէնտի երկրորդ օրդի Մեծ. Ստեփան Էֆէնտի, որ իւր ազնուարարոյ վարուք և փայլուն կրթութեամբ և քաջակազ ցերեզմանին փառքն և ուրախութիւնն է, և Պօլիս Մագուստեան Սիմօն—Պէլի դուստր ազնիւ Բոլիսի օրիորդին նշանուեցաւ:

—Մեր Գեր. Առաջնորդ արքայանք, Եփեսոսի կողմերը գտնուած Ս. Յովհաննէս կոչուած ուխտատեղոյն տօնի անթիւ Մայիս 11 կիրակի անտու նոյն ուխտատեղին ուղևորեցաւ, ուր շրջակայներէն եկող ուխտաւորաց բազմութիւնը հողեւորագէտ միութեանը վերջին, նոյն օրը երեկոյն մեկնեցաւ ի Գաւառ: ուր նորիցուած եկեղեցւոյն օծումը և ազգային ինչ ինչ կարևոր գործերու տնօրէնութիւնն ղառարկել վերջ Մայիս 21 շրջաքաղթի օրը վերագարձաւ:

—Եօթնեկիս մէջ տարածայնութիւն մի ելալ թէ Յունաստանի սահմանէն առագաստաւոր նաւով մի եկող աւազակաց խումբ մի Գաւառ թայի և Սեօքէի կողմերը ելեր են: Դժբաղդաբար հաստատուեցաւ սոյն չուրը: Առաջակաց այս խումբը 18 անձերէ բաղկացեալ, իրեն պարագլուխ ունի Լազոս անուն մէկը, որ ասկէ 3 ամիս առաջ սպաննած է ալպանացի մը, որ Այսթընի երկաթուղոյն պաշտօնեայններէն Այստուրուքի կայարանին մէջ կը ծառայէր:

Սոյն խումբն Սամսո կղզւոյն դիմացի ցամաքը ելնելով յարձակեցան նախ Աք—քէյ և Չիլիպան կոչուած գիւղերուն վրայ և բաւական կողպտուներ ըրին: Երբ մտադիր էին այս չարագործները յարձակիլ նաև Քէլէպէք գիւղին վրայ, իմանալով թէ գիւղին մէջ պատրաստութիւնք եղած են զիրենք ձեռքաւաղելու, խոյս տուին ուրիշ կողմեր: Մեր Տեղական կառավարութիւնն արդէն բանակցութեան մտնելով արշապեղապարի և Սամսոի կառավարութեանց հետ համաձայնած են որ յիշեալ խումբը կամ ող կամ սպանուած պէտք է ձեռքաւաղուի: Արդէն կարևոր միջոցներն ի գործ դրուած են: Արշապեղապարի և Սամսոի կառավարութեանց կողմանէ յատուկ հետամուտներ զրկուած են կառկածելի եղած կողմերը փնտրելու համար: Նոյնպէս Զմիւռնիայէն 150 կանոնաւոր զօրք, տեղակալ—Տաղարապետի մը հրամանատարութեան ներքե, և յիսուն ձիուոր քաղաքագահ զօրք գնդապետին հանդերձ զրկուած են չարագործները փնտրելու: Արշապեղապարի քաղաքագահ զօրաց գլուխ Իպրահիմ—Պէյ, որ երկար տարիներէ ի վեր այսպիսի չարագործաց սարսափն եղած է, անձամբ գնաց Սեօքէի կողմերը, ուր Այսթընի Միւթէսարուֆն իսկ իրեն ներսի կը գտնուի: Կը հաստատեն թէ երկու շաբթի մեր նաւահանգիստն մտնող Սիւնէ ուրմբանալի նաւապետին իսկ առաջարկուած է որ այս մասին կարելի օգնութիւնն ընէ: Քաջայայտ եմք որ շատ չունցած յիշեալ չարագործներն կառավարութեան ձեռքը պիտի իյնան:

ՎԵՐՉԻՆ ԼՈՒՐԵՐ

Յար տիւ Պոֆօր կ'ըսէ թէ մեծ տէրութեց դեպքաններն սոյն կամ առաջիկայ եօթնեկի մէջ հաւաքական ծանուցանողով մի Բ: Դունէն պիտի խնդրեն առ կախ մնացած խնդիրներու կատարումը: Եւ եթէ մինչև Յունիս ամսոյ կ'էսք Բ: Դունը յիշեալ ծանուցանողին համաձայն չգրուուն, Հիւլենական խնդրոյն կարգադրութեան համար Պէրլին նիստ պիտի գումարուի, և տէրութեանց մէջ համաձայնութիւն դոյաջնելով միւս խնդիրներն ևս կարգադրելու միջոցներուն վրայ պիտի մտածեն:

—Բրիտանական արտաքոյ կարգի դեպքս Պ. Կոչէնի իւր կառավարութեան կ'ըսէ ընդ առաջնած պաշտօնն թուրքոյ դանձոյլին վիճակին թնաւ վերաբերութիւն չունենալով լոկ քաղաքականութեան պատկանիլը, առատուած է: Սըր Հէնրի Լէյարտ երկու շաբթի իրիկուն Նորին կ'այցերական վեհափառութեան հետ առանձին տեսութիւն մի ունեցաւ:

—Յունաստանի սահմաններու կարգադրութեան խնդրոյն համար յատուկ ուսումնական յանձնաժողովի մը կազմութիւնը առաջարկելու որոշում եղեր է Անգլիոյ խորհրդարանին մէջ:

—Ս. Բէյ Էրպուրկէն կը գումարենայսթուհոյն վախճանիլը, որ տեղի ունեցեր է Յունիս Յինըստ նոր տուժարի:

—Մ'օնթէնէ կողմից որոշեր են պատերազմի ձեռնարկութիւն նեղ ալպանացւոց դէմ:

—Աւստրիոյ կողմէ առաջարկութիւն եղեր է Բ: Դունս զօրք զրկիլ Ելպանացւոց դէմ: Եւ պաշարել Շ. քաղաքն, որպէսզի թիւզի մէջ խմբուած ալպանացւոց յետ ամեն յարաբերութիւնը արգիւղեն:

—Խաւրիոյ խորհրդարանն նախագահ ընտրեց զՊ. Յարիսի 406 ձայնով ընդդէմ 410 պարագլուխ լիզի:

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԱՅԻՕՆ: փոքր ինչ լուսագոյն ընթացք կ'առնու: վաճառմունքն են 33 կողով ի հասարակ տեսակէ ի դին 220 գրուուչի չէքին: բացայ սոյն գետով վաճառել կամեցող շատ չկայ: ԲԱԼԱՄՈՒՏ: 2000 կենդ ինար վաճառեցաւ հասարակ տեսակէն 95 դրուչի: Իսկ Մէծ Գետին ընթացիկ տեսակէն 127 դրուչի կենդ ինարը: ԲԱՄՊԱԿ: Միւռնոյն վիճակի մէջ է: Մեքենայէ անցած 70 հակ վաճառեցաւ 400 դրուչի: 250 հակ Ատանա կենդ ինարը 370 դրուչի:

ՄԱՆՈՒՅՈՒՄ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԻՔ ՆՈՐ ԱՅԲԵՆԱՐԱՆ ՓՐԵՆՍԵՐԻՆ Մէկ ամսու մէջ ֆրանկէն անիւն կ'ըստը— Բէյ: Սոյն վերնագրով իզմիր տպուած, հրատարակիչ Գ. Մաթեան, Եւ իրուուրն վերստին 55 էրտէ բաղկացեալ Ֆրանսերէն Ալքեմարանն ուսուցման պարգեղանակովն, գրերու Եւ ձայներու զարտուղութեան բացատրութեամբն, Ֆրանսերէն բարերու Եւ խօսքերու կից դրուած հայերէն բարգմանութեամբն միջե: ցարդ մեր ազգի համար պատրաստուած Ալքեմարանսոյն մեզ ամենեւ օգտակարն է. հետեւաբար ստուգիւ կայող մեկ ամսուան մէջ Ֆրանսերէն լեզուի ընթերցումը աշակերտաց ուսուցանելու: Կը յորդորէ որ Ֆրանսերէն ուսնիլ փափագող ազգայինք, մտնաւանդ ազգային վարժարանաց տեսչութիւնք կատարութեան աւանդով սոյն Ալքեմարանն անուարիւրներն յօգուտ ի կիւ արկանեն: Գինն է 2 դրուոյ արծաթ:

Societe des quois de Smyrne

Այն վաճառականները որք Բէյ ընկերութեան վերաբերեալ տրոց ընկալագոյ մէջ որ ե իցէ սխալմունք մը կը յիշմարեն, այդ սխալմունքը գործուած գրասենեակը ներկայանալ կաղաչուին սխալմունքը հաստատուելէն յետոյ գումարը նորէն վերագարձուելու է: Իզմիր, 10 Մայիս 1880:

Սուր կ'ստեփաննու եկեղեցւոյ դիմացը Հայոց դեղարանի դեղագործ Պ. Պ. Բ. Վայրի կը ծանուցանէ Հայ նամարակութեան որ տղայք պատուամտելոյ համար նոր ու քարմ պատուաստ (աղբ) ունի քովը: ուղղը կընայ դիմել յիշեալ դեղարանը: Այրատ ընտանեաց համար արք է:

Տէր Լրագրոյս, Գ. Լ. Գ. Պաշտպան: